պարտականությունը կրում է պատասխանողը, Դատարանը գտնում է, որ ՔԴՕ 62-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով փաստի վիճելի հանդիսանալու բացասական հետևանքը կրում է Պատասխանողը, ինչի արդյունքում հիմնավորված և իրավաչափ չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելը:

Արդյունքում, Դատարանը գտնում է, որ հայցը հիմնավոր է և ենթակա է բավա-րարման:

<u>6. Դատական ծախսեր.</u>

ՔԴՕ 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՔԴՕ 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, գործի քննության հետ կապված այլ ծախսեր են գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

ՔԴՕ 108-րդ հոդվածի համաձայն.

«1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:»:

ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանն արձանագրում է, որ հայցը ամբողջությամբ բավարարելու պարա-գայում դատական ծախսը պետք է կրի Պատասխանողը, որից ենթակա է բռնագանձման Հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-ր, 362-րդ հոդվածներով

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ինժեներինգ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ պատասխանող «Երևանի քաղաքա-պետարան» ՀՄ-ի՝ բավարարել. Երևանի քաղաքապետարանի և «Ինժեներինգ» ՍՊԸ-ի միջև 03.11.2023թ. կնքված թիվ «ԵՔ-ՀԲՄԽԾՁԲ-23/100»

ծածկագրով գնման Պայմանագիրը Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի կողմից միակողմանի մասնակի լուծելու մասին 28.06.2024թ.որոշումը (ծանուցումը) լուծումը ճանաչել անվավեր:

2. «Երևանի քաղաքապետարան» ՀՄ-ից հօգուտ «Ինժեներինգ» ՍՊԸ-ի բռնագանձել՝ 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար: Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Միսեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am